



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2021 թվականի թիվ 165-Ա

ք. Երևան

**«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔՔ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի ԹԻՎ 154-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՓՈՓՈՒԹՅԱՆ ԹՈՂԱԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔՔ» ՍՊ ընկերության կողմից 2021 թվականի հոկտեմբերի 13-ին Հանձնաժողով մուտքագրված վարչական բողոքը՝ *սյարզեց*.

«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔՔ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ դիստրիբյուտոր) վարչական բողոք է ներկայացրել Հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 06-ի «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճելու մասին» թիվ 154-Ա որոշման (այսուհետ՝ վարչական ակտ) դեմ:

Հանձնաժողով ներկայացված վարչական բողոքում մասնավորապես նշված է, որ դիստրիբյուտորը դիմում է ներկայացրել Հանձնաժողով՝ հայտնելով, որ հանդիսանում է «Звезда HD» տեսալսողական ծրագրի դիստրիբյուտորը (դիստրիբյուտորի և ОАО "Телерадиокомпания Вооруженных Сил РФ"-ի միջև 2021 թվականի հունիսի 04-ին կնքված թիվ 284-21 պայմանագրի հիման վրա), իսկ «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերությունն (այսուհետ՝ ցանցային օպերատոր) առանց պայմանագիր կնքելու և առանց օրինական հիմքերի վերահաղորդում է վերոնշյալ տեսալսողական ծրագիրը՝ խախտելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Ըստ դիստրիբյուտորի՝ ցանցային օպերատորի նկատմամբ 2021 թվականի սեպտեմբերի 14-ին հարուցված թիվ 12 վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 24-ին իրականացվել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ ցանցային օպերատորի կողմից չի վերահաղորդվում դիմումում նշված տեսալսողական ծրագիրը, ինչն էլ հիմք է հանդիսացել ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճելու համար:

Այս կապակցությամբ դիստրիբյուտորը հայտնում է, որ վարչական բողոքով Հանձնաժողով ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ տեսագրությունները և «Ռոստելեկոմ» ընկերության կողմից 25. 01. 2021թ. և 10. 03. 2021թ. հրատարակված գովազդային գրքույկները և լուսանկարները, փաստում են այն մասին, որ ցանցային օպերատորի կողմից փաստացի իրականացվել է «Звезда HD» տեսալսողական ծրագրի վերահաղորդում, մասնավորապես, տեսագրություններից հետևում է, որ ցանցային օպերատորը իրականացրել է վերահաղորդումն ավելի վաղ, քան Հանձնաժողովի կողմից իրականացվել է տեղում դիտարկում և չի բացառվում, որ ցանցային օպերատորը դադարեցրել է վերոնշյալ տեսալսողական ծրագրի վերահաղորդումը տեղում դիտարկման ժամանակահատվածում՝ խուսափելու համար անբարենպաստ իրավական հետևանքներից:

Համադրելով փաստերը, դիստրիբյուտորը վարչական բողոքում ևս մեկ անգամ հայտնում է, որ նոր ներկայացված ապացույցներով հաստատվում է այն փաստը, որ ցանցային օպերատորի կողմից թույլ է տրվել Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի խախտում, որի համար վերջինս պետք է ենթարկվի օրենքով սահմանված պատասխանատվության:

Վարչական բողոքում դիստրիբյուտորը հղում կատարելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասին, գտնում է, որ վարչական մարմինը պարտավոր է ցուցաբերել միատեսակ մոտեցում նույն փաստական հանգամանքների նկատմամբ, որի կապակցությամբ մեջբերել է Հանձնաժողովի 02. 04. 2021թ-ի թիվ 49-Ա որոշումը, որով Հանձնաժողովը հիմք ընդունելով դիստրիբյուտորի կողմից ներկայացված նոր ապացույցը, բավարարել է դիստրիբյուտորի վարչական բողոքը և ցանցային օպերատորի նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց՝ Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի խախտման հիմքով:

Դիստրիբյուտորը գտնում է, որ սույն գործով ներկայացված փաստական հանգամանքները միատեսակ են Հանձնաժողովի 02. 04. 2021թ-ի թիվ 49-Ա որոշմամբ հաստատված փաստական հանգամանքների հետ, ուստի Հանձնաժողովը պետք է ցուցաբերի նույն մոտեցումը:

Դիստրիբյուտորը վարչական բողոքով խնդրում է բավարարել Հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 06-ի թիվ 154-Ա որոշման դեմ բերված վարչական բողոքը, ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 06-ին ընդունված վարչական ակտը և ցանցային օպերատորի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ ընդունել նոր վարչական ակտ:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 73-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ դիստրիբյուտորի կողմից Հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 06-ի թիվ 154-Ա որոշման դեմ բերված վարչական բողոքն ընդունել է վարույթ, քանի որ վարչական բողոքը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածների պահանջներին:

Հանձնաժողովը դիստրիբյուտորի վարչական բողոքի վերաբերյալ 2021 թվականի հոկտեմբերի 14-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները:

Սակայն, ցանցային օպերատորի կողմից վարչական բողոքի վերաբերյալ որևէ պարզաբանում և բացատրություն չի ներկայացվել:

Հանձնաժողովը վարչական բողոքը վարույթ ընդունելու մասին ևս ծանուցել է դիստրիբյուտորին և խնդրել վարչական բողոքում հիշատակված ժամկետների վերաբերյալ ներկայացնել պարզաբանում, որին ի պատասխան դիստրիբյուտորը կրկին անգամ Հանձնաժողով ներկայացրել է վարչական բողոքը և լրացուցիչ ապացույցները, իսկ «Յեզձա HD» տեսալսողական ծրագրի վերահաղորդման ժամկետների վերաբերյալ ներկայացված գրավոր պարզաբանմամբ հայտնել է, որ վարչական բողոքին կից ներկայացված լրացուցիչ ապացույցներով հաստատվում է, որ ցանցային օպերատորի կողմից իրականացվել է «Յեզձա HD» տեսալսողական ծրագրի վերահաղորդում և որպես լրացուցիչ ապացույց ներկայացված տեսագրություններում արտացոլված են նշված տեսալսողական ծրագրի վերահաղորդման առնվազն երկու տարբեր ժամանակահատվածներ, ինչը ենթադրում է, որ ցանցային օպերատորի կողմից համապատասխան իրավախախտումը կրել է շարունակական կամ տևող բնույթ: Դիստրիբյուտորի պնդմամբ, ներկայացված տեսագրություններից ակնհայտ է, որ ցանցային օպերատորը տարբեր ժամանակահատվածներում վերահաղորդել է «Յեզձա HD» տեսալսողական ծրագիրը, որպիսի իրավասությունը չի ունեցել, ուստի վերջինիս կողմից իրականացվել է Օրենքի 49-րդ հոդվածի շարունակական կամ տևող խախտում, ավելին, որպես լրացուցիչ ապացույցներ ներկայացված գովազդային գրքույկները ևս հրատարակված են տարբեր ժամանակահատվածներում, ինչը ենթադրում է, որ այդ գովազդային գրքույկների գործողության ընթացքում ևս իրականացվել է վերը նշված տեսալսողական ծրագրի տևական վերահաղորդում:

Դիստրիբյուտորն ընդհանրացնելով իր կողմից ներկայացված փաստերը, գտնում է, որ ցանցային օպերատորի կողմից առանց թույլտվության «Յեզձա HD» տեսալսողական ծրագրի վերահաղորդում իրավախախտումը կրել է տևող կամ շարունակական բնույթ, քանի որ միայն տեսագրությունները և գովազդային գրքույկներն արտացոլում են նշված տեսալսողական ծրագրի վերահաղորդման միմյանցից տարբերվող առնվազն 4 ժամանակահատվածներ, իսկ վերահաղորդումը ցանցային օպերատորը դադարեցրել է Հանձնաժողովի կողմից տեղում դիտարկում իրականացնելու ժամանակ, ինչի հետևանքով թույլ է տվել Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի խախտում:

### ***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Այսպիսով, վարչական բողոքի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված լրացուցիչ ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով դիստրիբյուտորի դիմումը՝ 2021 թվականի սեպտեմբերի 14-ին ցանցային օպերատորի

նկատմամբ հարուցել էր թիվ 12 վարչական վարույթը: Վարչական վարույթը հարուցվել էր ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրային հիմունքների դիմումում նշված տեսալսողական ծրագիրը վերահաղորդելու փաստով, որի դիստրիբյուտորը հանդիսանում է դիմումատուն:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով, իրականացրել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և արձանագրել է, որ 2021 թվականի սեպտեմբերի 24-ին ցանցային օպերատորի հեռարձակող կայանում ժամը՝ 12:00-ից ժամը՝ 12:30-ն ընկած ժամանակահատվածում ցանցային օպերատորի կողմից չի վերահաղորդվում դիմումում նշված «Звезда HD» տեսալսողական ծրագիրը: Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի տեղում դիտարկման արդյունքներին և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի խախտում չի հայտնաբերվել:

Ուստի, Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով Հանձնաժողովը 2021 թվականի հոկտեմբերի 06-ին թիվ 154-Ս որոշմամբ կարճել է ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 12 վարչական վարույթը:

Պետք է նշենք, որ Օրենքով ցանցային օպերատորների կողմից իրենց հեռարձակած տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները պահպանելու համար պարտավորություն սահմանված չէ, և քանի որ վարչական վարույթի շրջանակներում լրացուցիչ ապացույցներ ձեռք չեն բերվել, ուստի Հանձնաժողովի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 24-ին ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը վարչական վարույթի շրջանակներում ծառայել է որպես վարչական վարույթի ապացույց և հիմք է հանդիսացել 2021 թվականի սեպտեմբերի 14-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 12 վարչական վարույթը կարճելու համար:

Հանձնաժողովը որպես վարչական մարմին վարչարարությունն իրականացրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ապահովել է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդված) և Հանձնաժողովի կողմից իրականացվել է իրավաչափ վարչարարություն, իսկ ընդունված վարչական ակտն ընդունվել է Օրենքի դրույթների պահանջների պահպանմամբ և իրավաչափ է:

Սակայն, դիստրիբյուտորի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 13-ին վարչական ակտի դեմ բերված վարչական բողոքով ներկայացվել են նոր փաստեր և լրացուցիչ ապացույցներ, որոնք ըստ դիստրիբյուտորի վկայում են ցանցային օպերատորի կողմից կատարված իրավախախտման փաստը:

Հանձնաժողովի կողմից վարչական բողոքի հիման վրա ուսումնասիրվել են ներկայացված փաստերը և լրացուցիչ ապացույցները, որի արդյունքում հայտնի է դարձել, որ ներկայացված լրացուցիչ ապացույցները տարբեր ժամանակահատվածների փաստեր են (28. 09. 2020թ-ի, 13. 01. 2021թ-ի, 25. 01. 2021թ-ի և 10. 03. 2021թ-ի), որոնցով չի հիմնավորվում այն փաստը, որ Հանձնաժողովի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 14-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 06-ն ընկած ժամանակահատվածում իրականացված վարչարարության ընթացքում ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվել է խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագիրը:

Այսպիսով, վարչական բողոքի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում՝ առաջնորդվելով ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացրած ապացույցներով, Հանձնաժողովն ամրագրում է, որ Հանձնաժողովը որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացնում է մշտադիտարկում, իսկ ցանցային օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Տվյալ դեպքում, Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի հոդվածի 2-րդ մասով՝ վարչական վարույթը հարուցել է դիստրիբյուտորի դիմումը Հանձնաժողովում ստանալու օրը՝ 2021 թվականի սեպտեմբերի 14-ին և վարչարարության ընթացքում Օրենքի 42-րդ հոդվածով սահմանված դրույթներին համապատասխան իրականացրել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, որի արդյունքում էլ 2021 թվականի սեպտեմբերի 24-ին արձանագրել է, որ խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագիրը ցանցային օպերատորի կողմից չի վերահաղորդվում, որն էլ հիմք է հանդիսացել վարչական վարույթը կարճելու համար: Վարչական վարույթը եզրափակվել է 2021 թվականի հոկտեմբերի 06-ին վարչական ակտի ընդունմամբ, իսկ դիստրիբյուտորի կողմից վարչական բողոքի շրջանակում ներկայացված լրացուցիչ ապացույցներն ավելի վաղ ժամանակահատվածի փաստեր են և չեն ընդգրկում վարչական վարույթի իրականացման ժամանակահատվածն, ուստի հիմնավոր և բավարար չեն հաստատված համարելու այն փաստական հանգամանքը, որ վարչական վարույթի իրականացման ժամանակահատվածում ցանցային օպերատորի կողմից Օրենքի պահանջի խախտում է թույլ տրվել:

Հարկ ենք համարում նշել, որ վարչական բողոքում դիստրիբյուտորի կողմից բերված այն փաստարկը, որ Հանձնաժողովի 02. 04. 2021թ-ի թիվ 49-Ա որոշմամբ հաստատված փաստական հանգամանքները միատեսակ են սույն գործով ներկայացված փաստական հանգամանքների հետ և Հանձնաժողովը պետք է ցուցաբերի նույն մոտեցումը, նույնպես հիմնավոր չէ, քանի որ Հանձնաժողովը 02. 04. 2021թ-ի թիվ 49-Ա որոշմամբ բավարարել է վարչական բողոքը՝ հիմք ընդունելով ներկայացված լրացուցիչ ապացույցները, որոնք վերաբերվել են վարչական վարույթի ժամանակահատվածին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

Հետևաբար, Հանձնաժողովի 02. 04. 2021թ-ի թիվ 49-Ա որոշման հիմքում ընկած փաստական հանգամանքները տարբեր են և միատեսակ չեն սույն գործի հետ կապված փաստական հանգամանքների հետ, հետևաբար, Հանձնաժողովը պարտավոր է անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

Հանձնաժողովը վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները արձանագրում է, որ վարչական վարույթի իրականացման ժամանակահատվածում ցանցային օպերատորի կողմից Օրենքի խախտում թույլ չի տրվել:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված ժամկետում իրականացված վարչարարության արդյունքում 2021 թվականի հոկտեմբերի 06-ին ընդունված թիվ 154-Ա վարչական ակտն իրավաչափ է և օրենքով սահմանված պահանջներին համապատասխան է ընդունվել, նշում է պարունակում այն բոլոր փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք Հանձնաժողովին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշումը:

Հետևաբար, Հանձնաժողովի կողմից ընդունված իրավաչափ վարչական ակտը չի կարող ուժը կորցրած ճանաչվել:

Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Կարգավորող պետական մարմինը՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 18-րդ մասերը սահմանում են.

«1. Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

18. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց:»

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է՝ սույն հոդվածով սահմանված իրավախախտումներ կատարած անձի նկատմամբ տուգանք կարող է կիրառվել իրավախախտում կատարելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող կամ տևող իրավախախտման դեպքում՝ այն հայտնաբերելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս առաջնորդվում է ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է՝

բ) մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ լրացուցիչ ապացույցները ներկայացման պահին եղել են Հանձնաժողովի կողմից երկամսյա ժամկետում իրականացված վարչական վարույթի ժամկետից ավելի վաղ ժամանակահատվածի (28. 09. 2020թ-ի, 13. 01. 2021թ-ի, 25. 01. 2021թ-ի և 10. 03. 2021թ-ի), ուստի ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, 49-րդ հոդվածի 1-ին մասի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 57-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասը, 76-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Մերժել «ՎԻ ԷՍ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության վարչական բողոքը՝ անփոփոխ թողնելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 06-ի թիվ 154-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈՒԹՅԱՆ**

27 հոկտեմբերի 2021թ.

ք. Երևան